Տ. ՆԵՐՍԵՀԱԲԵՂԱ ԽԱԼԱԹՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ

(Կենսագրական ակնարկ)

Գրիգոր Խլաթեցին ապրել և ստեղծագործել է ԺԴ դարավերջին և ԺԵ դարի սկզբներին, Հայաստանում ստեղծված հասարակական-քաղաքական բարդ իրավիճակում, հոգևոր արժեքների անկման, ծավալված հալածանքների և օտար զավթիչների ասպատակությունների պայմաններում:

Նրա ուսման, քարոզչության, գրական ու գրչագրական գործունեության շրջանը ուղեկցվում էր համընդհանուր բռնագաղթերով, որոնց պատճառով անվանի գիտնական վարդապետը ստիպված էր տեղափոխվել մի վայրից մյուսը՝ ստեղծագործելով և ուսուցանելով Հայ Եկեղեցու բազմադարյա ուսմունքը, ջանալով իր համեստ լուման ներդնել հայ մշակույթի և ազգային նկարագրի պահպանման գործում: Ուստի Գրիգոր Խլաթեցու ապրած ժամանակաշրջանը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի հասարակական և քաղաքական համառոտ պատկերը:

Կորցնելով պետականությունը՝ հայ ժողովուրդը գտնվում էր պատերազմների թատերաբեմում և հայտնվել էր օտար նվաճողների տիրապետության լծի տակ: Պարբերաբար նվաճվում, ավերվում ու թալանվում էին ծաղկուն քաղաքներ, գյուղեր և մշակութային օջախներ: Տևական հարձակումները, կոտորածն ու բռնագաղթը, ծանր հարկահանությունները պատճառ դարձան զանգվածային արտագաղթի, ինչպես նաև շատ բնակավայրերի ու հոգևոր կենտրոնների կործանմանն ու անկմանը:

Սկսյալ ԺԴ-ԺԵ դարերից Հայաստանում գրեթե ամենուր վերանում են Զաքարյանների օրոք Արևելյան Հայաստանում ձեռք բերված խոշոր ֆեոդալական տիրույթները: Սակայն այդ բարդ ժամանակահատվածում Եկեղեցին պահպանում է որոշ իրավունքներ: Եկեղեցու համար բարենպաստ եղավ հատկապես հայրապետական աթոռի տեղափոխությունը Սսից Էջմիածին:

Դեռևս ԺԴ դարի վերջերին Վանա լճի շրջակայքում և Տուրուբերանում հաստատվեցին Կարա-Կոյունլու, իսկ Մոկսում, Աղձնիքում և Ծոփքի արևելյան շրջաններում՝ Ակ-Կոյունլու թուրքմանական ցեղերը, որոնք Հայաստան էին ներխուժել դեռևս մոնղոլական առաջին արշավանքների շրջանից: Հետագայում նրանց քաղաքական և ռազմական հզորությունն այնքան մեծացավ, որ նրանք կարողացան իրենց գերիշխանության տակ առնել Հայաստանի տարբեր շրջաններ: 1378 թ. Կարա-Կոյունլուների առաջնորդներ Ղարա-Մահմեդը և նրա որդի Ղարա-Յուսուֆը հիմնեցին իրենց իշխանությունը Տարոնի, Սասունի և Քաջբերունիքի շրջաններում, իսկ Ակ-Կոյունլուները՝ Օսմանի գլխավորությամբ, Հայաստանի հարավային շրջաններում՝ կենտրոն ունենալով Դիարբեքիր կամ Ամիդ քաղաքը[1]:

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975թ., էջ 596:

Հասարակական և քաղաքական նման բարդ իրավիճակի մեջ էր Հայաստանը, երբ սկսվեցին Լենկ Թեմուրի արշավանքները: Պատերազմները, որոնք տեղի էին ունենում Թեմուրյանների, Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլուների միջև, էլ ավելի աղետալի դարձրեցին հայ ժողովրդի վիճակը[2]:

Տնտեսական ու քաղաքական նման ծանր պայմաններում Հայաստանում, այնուամենայնիվ, շարունակվում էր գիտական, հոգևոր և մշակութային կյանքը: Հայկական վանքերում, դպրոցներում ու համալսարաններում պատրաստվում էր նոր սերունդ, գրվում էին գիտա-մշակութային նոր ստեղծագործություններ ու աշխատություններ: Արդյունքում, այդ բախտորոշ ժամանակաշրջանում իրենց ազգային-եկեղեցական գործունեությունը ծավալեցին այնպիսի խոշոր հոգևոր ու գիտական եկեղեցական դեմքեր, ինչպիսիք են Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Գրիգոր Խլաթեցին, Հակոբ Ղրիմեցին, Մատթեոս Ջուղայեցին, Առաքել Սյունեցին, Թովմա Մեծոփեցին, Մկրտիչ Նաղաշը, Առաքել Բաղիշեցին և բազմաթիվ ականավոր այլ հոգևորականներ, որոնց շարքում իր ուրույն տեղն է գրավում Գրիգոր Խլաթեցին:

Խլաթեցին ծնվել է 1349 թ. Ծեր և Խոյանդ ամուսինների ընտանիքում, Վանա լճի արևմտյան ափին գտնվող Բզնունյաց գավառի Խլաթ քաղաքում[3]: Խլաթեցին պատմությանը հայտնի է նաև «Ծերենց» մականունով, որը նա ստացել է իր հոր անունից «որդի Ծերին», իսկ Խլաթեցի անունը ժառանգել է ծննդավայրից: Հայտնի է նաև «Բզնունի», «Ցիպնացի» կամ «Գրիգոր վարդապետ Արծկոյ» անուններով[4]: 1361 թվականին, երբ դեռ Խլաթեցին տասներկուամյա պատանի էր, իր ուսումնառությունը սկսում է Տիրատուր վարդապետի աշակերտ Վարդան ճգնավորի մոտ. «Սուրբ վարդապետն Գրիգորիոս էր սնեալ և վարժեալ ի գործ քահանայութեան, առ սուրբ ճգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ՝ որ հնգետասան ամ յանապատի էր բնակեալ առ մեծ վարժապետն Տիրատուր» [5]: Եվ ապա նշվում է նաև նրա ուսման տևողությունը. «...Եւ առ նմա կացեալ ամս վեց...»[6]: Վարդան ճգնավորի մոտ վեց տարի սովորելուց հետո 1367 թ. Խլաթեցին ձեռնադրվում է աբեղա: Թողնելով իր ուսուցչին՝ նա մոտ տասը տարի ուսուցչական և քարոզչական գործունեություն է ծավալում Բզնունյաց գավառում. «Մինչ զի լուսաւորէր զամենայն բնակիչս գաւառին իմաստութեամբ և ուսմամբ՝ իբրև զկատարեալ վարդապետ»[7]:

Այնուհետև իր հոգևոր եղբայրները խորհուրդ են տալիս «երթալ առ մեծ վարժապետն

---

[2] **Հ. Մանանդյան,** Երկեր, Երևան, հ. Գ, էջ 356: Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972 թ., էջ 23-55: **Լ. Խաչիկյան**, ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս. Բ, Երևան, 1958 թ., էջ 135:

[3] «Գրիգոր որդի հաւատարիմ առն Աստուծոյ Ծերի, գոլով ի քաղաքէն Խլաթայ», վկայում է Թովմա Մեծոփեցին: **Թ. Մեծոփեցի**, Պատմութիւն, էջ 41:

[4] **Լ. Խաչիկյան**, ԺԴ դ. հիշատակարաններ, Երևան, 1957, էջ 331: Հայոց նոր վկաներ, էջ 276:

[5] Տիրատուր վարդապետը Կիլիկեցին սովորել է Գլաձորում, ապա Նչեցու հետ աշխատել որպես վարդապետ: 1338 թվականին Գլաձորից տեղափոխվում է Հերմոնի վանք (դարձյալ Վայոց Ձորում) և ղեկավարում համալսարանը մինչև 1356 թվականը: Ժամանակի այս նշանավոր վարդապետի աշակերտներից է հիշյալ Վարդանը, որը պասնհինգ տարի նրա մոտ սովորելուց հետո իր գործունեության վայր է դարձնում Ցիպնա վանքը:

[6] Հայոց նոր վկաներ, աշխատ. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 264:

[7] Նույն տեղում, էջ 265:

Յոհաննէս Որոտնեցի՝ մականուն Կախիկ՝ կախեալ ի սէրն Յիսուսի...»[8]: 1378 թ. Գրիգոր Խլաթեցի աբեղան Որոտնավանքում աշակերտում է հոչակավոր գիտնական-վարդապետին: Ութամյա աշակերտության ընթացքում Խլաթեցին սովորում է մարդաբանություն, փիլիսոփայություն, տիեզերագիտություն, աստվածաբանություն, ճարտասանություն և այլ առարկաներ: Կարճ ժամանակամիջոցում նա աչքի է ընկնում իր բացառիկ ընդունակություններով՝ դառնալով իր ուսուցիչ վարդապետի սիրելին. «Ուսումնակից իւր ունենալով զհամանուն Գրիգոր Տաթևացի...»[9]:

1384 թ. արշավանքների հետևանքով ավերվում ու թալանվում է Սյունիքը: Որոտնեցու աշակերտներից մեկը՝ Հակոբը, ընդօրինակում է մի ձեռագիր, որն ավարտելուց հետո գրում է. «Սկիզբն առեալ ի յերկիրն Որոտան՝ ի դրունս Սուրբ Կարապետի և աւարտեալ ի յերկիրս Գողթան՝ ի յանապատս Սինէական, ի դրան Սուրբ Յովհաննիսի, առ ոտս մեծ րաբունապետի Յոհաննիսի...ի թուաբերութեան Յաբեթական տոմարիս ՊԼԴ (1385թ.)»[10]: Սրանից երևում է, որ ավերումների հետևանքով Որոտնեցին թողել էր Որոտանը և արդեն 1385 թվականին իր աշակերտներով գտնվում էր Գողթան գավառում: 1386 թ. նրանց տեսնում ենք Երնջակում. «Բ ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր աշակերտօք հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով...»[11]:

1386 թ. հունվարի 6-ին Երնջակ գավառի Ապրակունյաց վանքում վախճանվում է Հովհան Որոտնեցին: Նրա մահվան թվականի հավաստի աղբյուրներից են Թովմա Մեծոփեցու և Գրիգոր Խլաթեցու երկերը: Մեծոփեցին նկարագրելով Լենկ Թեմուրի 1386 թվականի առաջին արշավանքը՝ գրում է. «Եւ ի սոյն աւուրս մեծ վարդապետն Յովհաննես հանգեաւ ի Քրիստոս»[12]: Որոտնեցու մահից և Լենկ Թեմուրի ավերածություններից հետո Խլաթեցին թողնում է Ապրակունիսի վանքը:

Աստապատի րաբունապետ Սարգիս Ապրակունեցու գլխավորությամբ հավաքվում են վարդապետները և համալսարանի րաբունապետ կարգում Գրիգոր Տաթևացուն: Որոտնեցու մահից հետո միաբանները մեկնում են տարբեր վայրեր. «Զի համշիրակ եղբարքն իւր գնացին ի նմանէ: Մեծն Յակոբ գնաց յերկիրն Արարատեան...եւ վարդապետն Գրիգոր (կամ Գէորգ) գնաց աշակերտովք իւրովք ի գաւառն Եկեղեցեաց յԵրզնկայն և այլք աստ և անդ...»[13]:

Գրիգոր Խլաթեցին Երնջակից գնացել էր Երևան և ապա 1387 թ. Այրիվանք՝ իր վաղեմի երազանքը կատարելու համար, Մխիթար Այրիվանեցու՝ հարյուր տարի առաջ (1286 թ.) գրած Գանձարանը տեսնելու: Այդ առիթով նա գրում է.

...Զի ի վաղուց հետէ ըղձեալ,
Տեսլեան տեղոյս ես տենչացեալ...

---

[8] Նույն տեղում:

[9] «Եւ ութ ամ վարժեալ և սիրեցեալ ի նմանէ», Հայոց նոր վկաներ, էջ 265:

[10] ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 553:

[11] Նույն տեղում, էջ 560:

[12] **Թ. Մեծոփեցի**, Պատմութիւն, էջ 56:

[13] Նույն տեղում, էջ 33:

Քան զկամացս իմ կատարեալ,
Քսան ու վեց ամ յառաջեալ,
Զի Այրիվանաց անուն լըվեալ...[14]:

Այրիվանքից նա վերադառնում է Քաջբերունիք, երբ Սարգիս Ապրակունեցին Աստապատից անցել էր Հեր գավառ և ապա եկել Քաջբերունիք՝ Խառաբաստա վանք, որտեղ և հաստատել էր իր դպրոցը[15]: 1387 թվականին Խլաթեցին աշակերտում է Սարգիս Ապրակունեցուն. «Եկն դարձեալ ի բնիկ գաւառն իւր առ մեծ վարժապետն Սարգիս՝ յերկիրն Քաջբերունեաց՝ ի հոչակաւոր և աստուածաբնակ ուխտն Աստուածածնի, որ Սուխարավանք վերակոչի: Եվ անդ վարժեալ և բազում աշակերտութեամբ դեգերեալ՝ ընկերակից իւր ունելով զմեծ ճգնաւոր վարդապետն Վարդան Հոգեաց վանացն...»:

Ինչպես ասվում է նրա վարքում, շուրջ տասը տարի Խլաթեցին մնում է Սարգիս Ապրակունեցու մոտ և ստանում դասավանդելու իրավունք և վարդապետական աստիճան. «Եւ տասն ամ առ նմա համեալ՝ ընկալեալ ի նմանէ զաստիճան վարդապետութեան և լուսաւորէր առհասարակ զամենեսեան իմաստութեամբ... եւ առեալ հրաման ի վարժապետէն իւրմէ դաս ասել և աշակերտ ժողովել, եւ նա եկաւ բնակեցաւ յերկիրն Բզնունեաց՝ ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն Ստեփաննոսի Նախավկայի, ի վանն Ցիպնա, յառաջին տեղին իւր»[16]: Խլաթեցու վարդապետական աստիճան ստանալու ճիշտ թվականը հայտնի չէ: Սակայն 1391 թ. ընդօրինակած մի Ոսկեփորիկում Խլաթեցին իրեն անվանում է «պիտականուն վարդապետ»[17], իսկ 1393 թ. Խառաբաստա դպրոցի աշակերտ Մխիթարը մի ձեռագիր է ավարտում, որտեղ գրում է. «Առ ոտս երջանիկ և հեզահոգի Սարգիս րաբունապետի և վարդապետին իմոյ Գրիգորի»[18]:

Քանի որ 1387 թ. Խլաթեցին գալիս է Այրիվանքից Սարգիս Ապրակունեցու մոտ աշակերտելու և արդեն 1391 թ. նա իրեն անվանում է «պիտականուն վարդապետ», հետևաբար նա այդ աստիճանը չէր կարող ստանալ 1400 թվականին կամ ավելի ուշ, ինչպես նշվում է Խլաթեցու վարքում: Պարզվում է, որ 1391 թ. Խլաթեցին արդեն վարդապետ էր, և հաճախ մենք նրան տեսնում ենք Խառաբաստա վանքում արդեն որպես ուսուցանող, որը վկայում է վերը նշված 1393 թ. ընդօրինակած ձեռագիրը, որտեղ ասվում է. «Հեզահոգի Սարգիս րաբունապետի և վարդապետին իմոյ Գրիգորի»: Այսպիսով, ավարտվում է Գրիգոր Խլաթեցու երկարամյա ուսումնառության շրջանը:

Գրիգոր Խլաթեցին այնուհետև ծավալում է մանկավարժական, քարոզչական, գիտական և գրչական բեղմնավոր գործունեություն, որի ընթացքում դարձյալ չեն դադարում օտար զավթիչների հարձակումներն ու հալածանքները: Գիտնական վարդապետն աշխատում է, ըստ կարելվույն ձեռնհաս լինել կարիքավորներին, օգնել բազմաչարչար իր ժողովրդին ու Եկեղեցուն: Նա օր ու գիշեր կատարում էր տարբեր տեսակի ընդօրինակութ-

[14] ՄՄ. ձեռ. թիվ. 6529, էջ 4բ, 5ա:
[15] **Թ. Մեծոփեցի,** Պատմութիւն, էջ 35:
[16] Հայոց նոր վկաներ, էջ 266:
[17] **Հ. Թոփչյան**, Ցուցակ ձեռագրաց Արմաշի, էջ 20-21:
[18] ԺԴ դ. յիշատակարաններ, էջ 606:

յուններ: Դրա համար առանձին բծախնդրությամբ փնտրում ու գտնում էր առավել արժեքավոր գրքեր: Ընդօրինակություններից ստացված գումարը բաժանում էր աղքատներին, կերակրում և հագցնում նրանց. «Զի գրէր յամենայն ժամ, յամարայնի և ի ձմերայնի, յաշուն և ի գարուն, ի տուէ և ի գիշերի, ի տուն և ի դուրս, ի վանք և ի գեօղ և ի քաղաք: Եւ զայս ոչ եթէ ի մանկութեան ժամանակն միայն, այլ ի ծերութեան, մինչև յօր նահատակութեան, գրէր և վաճառէր և գինն տայր կարօտելոց, և ոչ միայն քրիստոնէից, այլ այլազգաց ևս առնէր ողորմութիւն...Եւ սա անձամբ վաստակէր ի գործ գրչութեան...օգնէր...զոմանց հանդերձիւ, զոմանց գէրիս ազատէր...եւ զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր»[19]:

Գրիգոր Խլաթեցին միևնույն ժամանակ նյութեր է հավաքում Հայսմավուրքի համար՝հին նահատակների շարքում ավելացնելով նոր վկաներին՝ իր ժամանակակիցներին: 1401 թ. Նա արդեն ավարտում է Հայսմավուրքը, որը հայտնի է Ծերենցի խմբագրություն անվամբ[20]: Իսկ մինչ այդ ավարտել էր ճառերի մի մեծ ժողովածու:

Խառաբաստա վանքի րաբունապետ Վարդանը, որը Սարգիս Ապրակունեցու մահից հետո (1401թ.) ստանձնել էր դպրոցի րաբունապետությունը, թշնամիներից հալածվելով՝ դպրոցը տեղափոխում է Սալնապատի վանք և քիչ անց մահանում: Նոր րաբունապետ է նշանակվում Գրիգոր Խլաթեցին, որը, ելնելով քաղաքական անբարենպաստ պայմաններից, դպրոցը տեղափոխում է Ցիպնավանք, իսկ որոշ ժամանակ անց ցրում այն[21]:

1408 թ. Մեծոփավանք է գալիս արդեն մեծ հռչակի հասած Գրիգոր Տաթևացին և կազմակերպում բարձր տիպի դպրոց: Տարիուկես դասավանդելուց հետո՝ նա հեռանում է: Անհայտ է, թե իրենից հետո Տաթևացին ում է թողել դպրոցի րաբունապետությունը: Օրինակ՝ Ա. Մովսիսյանը գտնում է, որ այդ պաշտոնը Տաթևացին հանձնել է Թովմա Մեծոփեցուն[22]: Իսկ Գրիգոր Խլաթեցու մի նամակից պարզվում է, որ այդ պաշտոնը նա հանձնել է իրեն: Արդյոք դրանից չի դժգոհել Հովհաննես Մեծոփեցին, որ հեռացել էր Մեծոփա վանքից իր մտերիմների՝ այդ թվում նաև Թ. Մեծոփեցու հետ և այլևս վանք չէր վերադարձել: Սա պարզվում է Խլաթեցու սույն նամակից, որը ուղարկել էր Թովմա Մեծոփեցուն՝ խնդրելով նրան վերադառնալ Մեծոփա վանք՝ խոստանալով հանձնել դպրոցի րաբունապետությունը. «Այսուհետև առ իս դարձիր, ի տուն քո, և առ եղբարս քո...Եւ թէ կու ջանաս՝ զՅովհաննես վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո՝ առ ընտանիս քո...Դու առ մեզ արեկ, մեր աչացս լոյս ես և սրտի սուն: ի Տեր Յուսկայ

[19] **Թ. Մեծոփեցի**, Պատմութիւն, էջ 42:

[20] ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 593:

[21] «Այլ ոչ պարապեալ վարդապետական դաս: Վասն սառնացեալ բարուց ուսումնականաց մերում ազգի», - գրում է Թ. Մեծոփեցին, (Պատմություն, էջ 41): Թ. Մեծոփեցին փորձում է գրնել դպրոցի քայքայման պատճառը ոչ թե ժամանակի ծանր կացության, այլ մեր ազգի «սառնացեալ» բարքերում, որոնք նույնպես հեռևանք են այդ կացության: Ըստ երևույթին, ուսումնականաց ասելով ոչ միայն սովորողներին, այլև ուսումը հովանավորողներին նկատի ունի հեղինակը, առանց որոնց որևէ դպրոց չի կարող գոյատևել: Մանավանդ, որ ինքն ականատես է եղել «ուսումնականաց» եռանդին: Հենց ինքը 12 ընկերների հետ գնաց Տաթև՝ սովորելու: Գ. Տաթևացին, երբ եկավ Մեծոփավանք հարյուրից ավել աշակերտներ ուներ:

[22] **Ա. Մովսիսյան,** Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958 թ., էջ205:

որդոյ վանացն մինչ ի Սքանչելագործն քո է»[23]:

Ինչպես տեսնում ենք, նամակում նշված է Մեծոփա դպրոցի ազդեցության սահմանները՝ Բերկրի գավառի տեր Հուսիկի որդու վանքից մինչև Արծկե գավառի Սքանչելագործ վանքն ընկած տարածքը: Ըստ երևույթին այդ տարածքում ապրող բնակիչներից հավաքված գումարով էլ պահվում էր Մեծոփա դպրոցը:

Հովհաննես Մեծոփեցին այդպես էլ չի վերադառնում Մեծոփավանք և մահանում ու թաղվում է Հավուց թառում: Թ. Մեծոփեցին Մեծոփավանք է վերադառնում միայն 1410 թ. և վարում դպրոցի ռաբունապետությունը ավելի քան երեսուն տարի՝ Խլաթեցու հետ պահպանելով բարեկամական և մտերմական հարաբերություններ մինչև Խլաթեցու եղերական մահը՝ 1425 թվականը: Եվ հենց Մեծոփեցու խնդրանքով Խլաթեցին գրում է իր նշանավոր Պատմությունը, որը դժբախտաբար մեզ չի հասել:

Լինելով Գրիգոր Տաթևացու ուսումնակից ընկերը՝ արդեն ալեհեր Գրիգոր վարդապետը ունկնդրում է Տաթևացու դասախոսությունները, իսկ հաջորդ տարում համառոտում Վարդան Արևելցու «Արարածոց մեկնությունը»[24]: Այս աշխատությանը նա կրկին անդրադառնում է 1413 թ.[25]:

1415 թ. Գրիգոր Խլաթեցին ուղևորվում է Երուսաղեմ, որով իրագործվում է նրա վաղեմի երազանքը՝ տեսնել Տիրոջ սուրբ քաղաքը: Երուսաղեմում Խլաթեցին մնում է մինչև 1415-17 թթ. և ընդօրինակում «Ցանախապատում ճառքը»[26]:

Թովմա Բաղիշեցին այդ առիթով գրում է. «Եւ հասեալ ի բարիոք ծերութիւն՝ աւելի քան զեօթանասուն ամ, կամեցաւ գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, վարդապետօք և աշակերտօք, մխիթարել զհոգևոր և զմարմնաւոր աղքատսն՝ որ անդ կային՝ տրօք և իմաստութեամբ: Եւ երկու ամ յամեալ յԵրուսաղէմ, և ապա անտի եկեալ ուրախութեամբ և ցնծութեամբ ի բնիկ գաւառն իւր՝ զամենեսեան ուրախ առնէր»[27]:

Եթե մինչև Երուսաղեմ գնալը մենք նրան տեսնում էինք Խառաբաստայի դպրոցում, ապա այժմ՝ Երուսաղեմ գնալուց հետո, հստակ երևում է Խլաթեցու կապվածությունը Մեծոփա դպրոցի հետ, որտեղ ապրում և ստեղծագործում էին իր բարեկամները՝ Թովմա և Մկրտիչ Մեծոփեցիները, Հակոբ Ղրիմեցին և ուրիշները: Իր նահատակությունից երկու տարի առաջ Խլաթեցին ընդօրինակած մի Գանձարանի վերջում դնում է իր նշանավոր «Ողբը», որը մեզ հայտնի է «Ցիշատակարան աղէտից» վերնագրով[28]: Այն մանրամասն

---

[23] Վենետիկ, ձեռ. թիվ 1091, էջ 398: **Ս. Մարաբյան,** Գրիգոր Խլաթեցու նամակները, էջ 81:

[24] ՄՄ ձեռ. թիվ 2783, էջ 32ա:

[25] ՄՄ ձեռ թիվ 5435:

[26] ՄՄ ձեռ թիվ 8775: Գ. Նժդեհյանը Խլաթեցու Երուսաղեմ գնալու թվականը 1402-ն է համարում և գրում է, որ այդ է պատճառը, որ Սարգիս վարդապետի մահից հետո Խառաբաստա դպրոցի ռաբունապետը ջարձավ նա: Երուսաղեմ գնալը 1400-1405 թվականներին է դնում Գ. Խալաթյանցը:

Ինչպես տեսնում ենք, ճիշտ չեն թե՛ մեկը, թե՛ մյուսը: Դպրոցի ռաբունապետն ուսուցանելիս աշակերտներից առավել աչքի ընկնողներին պատրաստում էր իրեն փոխարինող: Այսպես՝ Հ. Որոտնեցին իր աշակերտներից ամենից շատ Գրիգոր Տաթևացու հետ էր կապված, որը և փոխարինեց իրեն: Կամ Սարգիս վարդապետի և իր աշակերտի՝ Վարդանի կապվածությունը, Հովհաննես Մեծոփեցու և Թովմա Մեծոփեցու հարաբերությունները և այլն:

[27] Հայոց նոր վկաներ, էջ 268:

[28] **Գ. Խալաթյանց**, Պատմական վիպասանութիւն, Ցիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ, Վաղար-

նկարագրում է 1386-1423 թթ. Հայաստանում տեղի ունեցած ավերածությունները և դաժան կոտորածները, որոնց ավարտն է կարծես իր՝ Խլաթեցու եղերական մահը:

1425 թ. Բաղեշի քուրդ բեկ Ռոշկանը թալանի և ավերի նպատակով իր զորքերով հարձակվում է Արծկե քաղաքի վրա և անխնա կոտորում ու թալանում տեղի բնակիչներին: Մի խումբ հրոսակներ գաղտնագողի մոտենում են Ցիպնավանքին. «Կամէին զբնակեալ սուրբ եղբարսն ի նմա սրոյ ճարակ տալ...»: Այդ դեպքի մասին Թովմա Բաղիշեցին գրում է. «Իսկ զերջանիկ և զերանելի այրն Աստուծոյ զմեծն Գրիգորիոս վարդապէտն ոչ կարացին հանել ի վանացն քանզի ասէր. «Աստ կեցից և աստ մեռայց»...Եւ մինչ նա յայնպիսի խորհրդեայն էր, հասին ի վերայ նորա բազմութիւնք անօրինացն՝ ծարաւիք արեան իբրև զշուն կատաղի և իբրև զգազան աղտեղի: Ընդունեցին զնա իբրև զոչխար անմոունչ և ասէն եթէ. «Դու ես որ Իսայուն Աստված ասես»: Եւ նա ասէ. «Այո՛, ես եմ, որ Իսայուն Աստված ասեմ, զի ճշմարիտ Աստված է»: Եւ ապա որպէս ոչխար զենին և հեղին զարիւն նորա՝ իբրև զգառին անմեղի: Եւ նա աղօթիւք կարդայր առ Աստված, ասելով. «Տէ՛ր Յիսուս, ընկալ զհոգի իմ ընդ անմեղ վկայիցն Քոց և խառնեա՛ զմահս իմ ընդ երանելի սրբոցն գնդից»: Եւ օրհնութեամբ և ճշմարիտ դաւանութեամբ աւանդեաց զհոգի իւր ի փառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»[29]:

Գրիգոր Խլաթեցին նահատակվում է 1425 թվականի մայիսի 27-ին. «Հաւուր կիրակէի մեծի Պենտեկոստէին Գալստեան Հոգւոյն Աստուծոյ»: Մեկ տարի անց՝ 1426 թվականի մայիսի 9-ին մահանում է նշանավոր գիտնական Հակոբ Ղրիմեցին:

Մեզ հայտնի գրեթե բոլոր սկզբնաղբյուրները Գրիգոր Խլաթեցու մահը համարում են ՊՀԴ (1425 թ.): Բացառություն են կազմում միայն մի քանի ձեռագրեր, որոնցում հիշվում է ՊՀԳ (1424 թ.), որն ըստ երևույթին Գ և Դ տառերի շփոթմունք է: Սակայն մահվան օրը բոլորը միաբերան ընդունում են Հոգեգալստյան կիրակին, որը 1426 թ. ընկնում էր մայիսի 27-ին: Բացառություն է կազմում Թովմա Բաղիշեցին, որը Խլաթեցուն նվիրված վարքում հիշում է. «ի մայիս ամսոյ ինն»[30]:

Հիմնվելով այն բանի վրա, որ Հոգեգալստյան կիրակին համընկնում է 1426 թ. մայիսի 19-ին (ԺԹ), իսկ իրենք ունեն 1425 թ. մայիսի 9-ը (Թ), Մ. Օրմանյանը, Հ. Աճառյանը և Հ. Մանանդյանը գտնում են, որ Թ (9)-ն վրիպակ է, որ նրանցից առաջ եղել է Ժ (10) թիվը և մայիսի 19-ը (ԺԹ) 1426 թ. Հոգեգալստյան կիրակին Խլաթեցու մահվան օրն է: Մ. Օրմանյանը, ելնելով դրանից, Հակոբ Ղրիմեցու մահը, որը տեղի է ունեցել Խլաթեցու մահից մեկ տարի հետո, դնում է 1427 թ. մայիսի 29-ը: Ղ. Ալիշանը ոչ թե 1426 թ. մայիսի ԺԹ (19), այլ ԻԹ (29) է ընդունում:

Այս կարևոր հարցը պարզաբանելու համար դիմենք սկզբնաղբյուրներին, որոնցից ամենահավաստին Մկրտիչ Մեծոփավանեցի վարդապետի մի հիշատակարանն է: Թովմա Մեծոփեցու, Թովմա Բաղիշեցու և Առաքել Բաղիշեցու՝ Խլաթեցուն նվիրված վկայաբանությունների գրման որոշակի թվականը հայտնի չէ, սակայն Մկրտիչ Մեծոփավանեցու վկայության թվականը 1426-ն է: Այդ թվականին Մեծոփավանեցին վերադառնում է Երու-

---

շապագ, 1898 . :

[29] Հայոց նոր վկաներ, էջ 269:

[30] Նույն տեղում, էջ 272: Հմմտ. ՄՄ. ձեռ. թիվ 992, էջ 504 ա,: Ձեռ. թիվ 1511, էջ 26 ա:

սաղեմից Մեծոփավանք և իմանում Խլաթեցու մահվան մասին: Իր հետ բերած մի ձեռագրի 201 բ էջում նա գրում է. «ՊՀԴ (1425 թ.) թուականին հանգեցաւ նահատակութեամբ Գրիգոր վարդապետն Ծերենց ի Քրիստոս, Հոգւոյն գալստեան կիրակէին, և միւս ամի ՊՀԵ (1426 թ.) Յակոբ վարդապետն Ղրիմեցի հինգշաբթի, օր Համբարձման, պակաս քան վարդապետն ի փառս Աստուծոյ Ամէն»[31]:

1425 թ. Հոգեգալստյան օրը, ըստ տոմարական հաշվարկների, ընկնում է մայիսի 27-ին՝ Գրիգոր Խլաթեցու նահատակության օրը: 1426 թ. Համբարձման օրը, հինգշաբթի, մայիսի 9-ը Հակոբ Ղրիմեցու մահվան օրը: Հոգեգալստյան օրը 1426 թվին ընկնում է մայիսի 19-ին, որը «Ժ /10/ պակաս, քան վարդապետին», այսինքն՝ 1426 թ. համբարձման օրը՝ մայիսի 9-ը, 10 օրով պակաս է նույն թվականի Հոգեգալստյան թվականից՝ մայիսի 9-ից: Այսինքն՝ վարքագիրը սխալմամբ Հակոբ Ղրիմեցու մահվան ամսաթիվը՝ մայիսի 9-ը, համարել է Գրիգոր Խլաթեցու նահատակության ամսաթիվը և թյուրիմացության տեղիք տվել: Հետաքրքիր է նաև Առաքել Բաղիշեցու ընդօրինակած Հայսմավուրքներից մեկի մեջ եղած ներբողյան ավարտը, որտեղ երևում է գիտնական ռաբունապետի համբավը ոչ միայն իր հավատակիցների, այլև օտարազգիների միջավայրում. «Զի անհաւատ ազգն քրդաց ի Խլաթայ եկեալ ի վերայ Արծկոյ երկիրն, և էր ռաբունին Գրիգոր ի վանքն Ցիպնայ: Եւ միաբանք վանացն փախեան և նա միայն մնաց, զի յօժար է զկամաւոր մահն՝ որ կեանքն է որ մահ, մանաւանդ փառաց պատճառ և պատուոյ: Եւ ըմբռնել զերջանիկ մեր ոմն քուրթ և յորժամ ծանեան, որ վարդապետն էր՝ ի նենգութենէն որպէս զոչխար զենին զնա ի վանքն Ցիպնայ ի մէջ այգեացն: Իսկ վաղվաղակի էառ զվրեժ անմեղ արեան վարդապետին: Զի գնացեալ ի քաղաքն Արծկէ և ըմբռնեցան Խ /40/ քուրթ, ընդ նոսին և զսպանող վարդապետին, և ասէ քուրթն՝ թէ վարձ սպանման վարդապէտին թող ձեզ լինի՝ ի բաց թողեք զիս: Եւ յորժամ լուան ի բերանոյ նորա զայս բան ազգն թուրքաց, առ ժամայն ի նոյն օրն կտոր կտոր արարին զնա: Եւ զայլ ընկերսն սպանին չարաչար: Զոր տեսեալ քրիստոնէինց յոյժ ուրախացեալ ետուն փառս Աստուծոյ: Նահատակեցաւ սուրբ վարդապէտն մեր Գրիգոր Խլաթեցին՝ որդի Ծերին ի թվականիս հայոց ՌՀԴ (1425) ի մայիս ամսոյ ԻԷ (27) յաւուր Հոգւոյ գալստեան մեծի կիրակէին ի փառս Քրիստոսի Աստուծոյ»[32]:

Գրիգոր վարդապետ Խլաթեցին եղել է ԺԴ-ԺԵ դարերի ականավոր և վաստակաշատ հոգևոր այրերից մեկը: Պատմագրության և բանասիրության ասպարեզում ներդրած մեծ ավանդի համար տաղանդաշատ և սրբակրոն հոգևորականը մեծ գնահատականի է արժանացել ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա պատմիչների ու գիտնականների կողմից. «Սուրբ հայրն մեր Գրիգորիոս, Նմանեալ Հօրն Երկնաւորի, որ զարեգակն ծագէ ի վերայ չարեաց և բարեաց, և ածէ անձրև արդարոց և մեղաւորաց»[33]:

Ողջ կյանքում Գրիգոր Խլաթեցին ընդօրինակել է բազմաթիվ ձեռագիր մատյաններ, պայքարել է հավատափոխության և դավանափոխության դեմ:

---

[31] ՄՄ. ձեռ. թիվ 1419, էջ 201 բ:

[32] ՄՄ. արխիվ, Գ. Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 91, վ. 6, էջ 14 :

[33] ՄՄ ձեռ. թիվ 4866, էջ 251 ա: